

**ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻ ՀԱՆԴԵՍԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆԸ  
ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ**

1. Հոդվածին և ամփոփումներին՝ վերնագրից հետո պետք է նախորդեն բանալի բառեր՝ թվով 8-10:

2. Հոդվածին պետք է հետևի ամփոփում՝ ռուսերեն և անգլերեն (ֆրանսերեն, գերմաներեն)՝ 100-300 բառ ծավալով: Այլալեզու հոդվածների դեպքում ամփոփումները համապատասխանաբար հայերեն են և երրորդ լեզվով: Ամփոփման վերնագիրն ու հեղինակի անունը ձևավորել ինչպես հոդվածի հիմնական բնագրում՝ առանց «Ամփոփում», “Резюме”, “Summary” և նման նշումների:

3. Հայերենի համար օգտագործել **AMM MairTcutcak (unicode)** տառատեսակը: Ռուսերեն և լատինատառ մասերը շարել Times New Roman տառատեսակով: Հիմնական բնագրի տառերը՝ շեղ (*italic*), չափը՝ 12, առ- դատակիներ՝ ուղիղ, չափը՝ 10:

4. Աշխատությունների տողատակի հղումներում կիրառել միջագայ-նորեն ընդունված հետևյալ ձևերը.

- ա. Գրքերի և պարբերականների վերնագրերը գրել շեղատառ (*italic*):
- բ. Հոդվածների (և գրքերի գլուխների) վերնագրերը՝ ուղիղ (ոչ շեղ), չակերտների մեջ:
- գ. Շարքերի վերնագրերը գրել փակագծերում՝ ուղիղ՝ հրատարակման վայրից առաջ:
- դ. Աշխատությանը վերաբերող տվյալներն իրարից բաժանել ստորակետով:
- ե. Նույն աշխատության կրկին վկայակոչման դեպքում նշել միայն հեղինակին և վերնագիրը կամ ճանաչելի ձևով համառոտումով:
- զ. Եթե կրկին վկայակոչումն անմիջապես հաջորդում է առաջինին, գրել «նույն տեղում» և էջահամարը (եթե փոխվել է): Եթե հաջորդաբար նույն հեղինակի տարբեր աշխատություններ են նշվում, գրել «նույնի» և աշխատության տվյալները:
- է. Մրանց գումարվում է ԲՄ-ում ավանդական դարձած հեղինակի անունը թավ (**bold**), իսկ խմբագրի, կազմողի, թարգմանչի անունը թավ և շեղ (**bold + italic**) գրելու պահանջը:

Օրինակներ՝

**Դաիր Անյաղթ**, *Սահմանք իմաստասիրութեան*, համահավաք ֆննական բնագիրը, թարգմանությունը գրաբարից ռուսերեն, առաջաբանը և ծանոթագրությունները **Ս. Ս. Արեշատյանի**, Երևան, 1960, պրակ ԺԵ., էջ 132:

**Paul J. Alexander**, “Medieval Apocalypses as Historical Sources”, *American Historical Review*, 73, 1968, p. 998:

**Մովսէս Կաղանկատուացի**, *Պատմութիւն Աղուանից աշխարհի* (ՄՀ<sup>1</sup>, ԺԵ հատոր, Ժ. դար), Երևան, 2011, էջ 27-437:

**Philonis Alexandrini Quaestiones in Genesim et in Exodum. Fragmenta Graeca**, ed. **F. Petit** (Les œuvres de Philon d’Alexandrie 33), Paris, 1978:

5. Հանախակի հղվող աղբյուրների համար մշակել համառոտագրություններ՝ ցանկը կցել հոդվածի վերջում:

6. Գլխավոր հավաքածուներում պահվող հայերեն ձեռագրերը հիշատակել հետևյալ հապավումներով.

ՄՄ 1746 (Մաշտոցի անվան Մատենադարան):

Եղմ. 1903 (Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանք):

Վնակ. 456 (Վենետիկի Մխիթարյան միաբանություն):

Վիեն. 2159 (Վիեննայի Մխիթարյան միաբանություն):

Փրգ. 58 (Փարիզ, Ֆրանսիայի Ազգային գրադարան):

Մնացած հավաքածուների համար հապավումներ կմշակվեն ըստ անհրաժեշտության: Առաջարկում ենք ծանոթանալ հետևյալ կայքէջում զետեղված և միջազգայնորեն կիրառվող հապավումներին՝ Coulie, *Liste des sigles utilises pour designer les manuscrits*, (Coulie – 2002),

<http://sites.uclouvain.be/aiea/wpontent/uploads/2014/03/Sigles.pdf>):

---

<sup>1</sup>= Մատենագիրք հայոց: Այլ հանրահայտ հապավումներ են ՊԲՀ = Պատմա-բանասիրական հանդես, ԲՄ = Բանբեր Մատենադարանի, ՀԱ = Հանդէս ամսօրեայ, ԼՀԳ = Լրաբեր հասարակական գիտությունների, ԲԵՀ = Բանբեր Երևանի համալսարանի, REArm = *Revue des Etudes Arméniennes*: